



## «Լոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը և  
կիրառումը առարկայի դասավանդման պրոցեսում

Առարկան՝ Ֆիզիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Հարությունյան Սուսաննա

Ուսումնական հաստատություն՝ Օձունի թիվ 1 միջն. դպրոց

Երևան 2022

**ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**Թեմա** **Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը և կիրառումը առարկայի դասավանդման գործընթացում**

**Հեղինակ՝** **Հարությունյան Սուսաննա**  
**Մարզ՝** **Լոռի**

**Ուսումնական հաստատություն՝** **Օձունի թիվ 1 միջնակարգ դպրոց**

**Բովանդակություն**

- 1.Նախաբան:Հետազոտության նպատակները,խնդիրները,արդիականությունը...2-5
- 2.Աշխատանքի բովանդակությունը.....6-12
- 3.Եզրակացություն.....12-14
- 4.Օգտագործված գրականության ցանկ.....15

## **Բովանդակություն**

- 1.Ներածություն: Հետազոտության նպատակները, խնդիրները:
- 2.Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը:
3. Պրոբլեմային ուսուցման կիրառումն առարկայի դասավանդման ընթացքում:
- 4.Եզրակացություն:
- 5.Օգտագործված գրականության ցանկ:

## **1. Ներածություն: Հետազոտության նպատակները, խնդիրները:**

Ի՞նչ ենք հասկանում «պրոբլեմային ուսուցում» ասելով: Ո՞րն է աշխատանքի նպատակը:

Հետազոտության նպատակն է՝ մեթոդաբանորեն հիմնավորել պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի կիրառման առանձնահատկություններն առարկայի դասավանդման ընթացքում՝ մեթոդական քայլաշարի միջոցով ընդգծելով թեմայի ուսուցման ժամանակ երևան եկող խնդիրները, դժվարությունները և առաջարկելով դրանց լուծման ուղիներ:


Ուսումնական գործընթացի զարգացման, կատարելագործման ուղիների որոնումը հանգեցնում է մանկավարժական տարբեր տեխնոլոգիաների մշակման, որոնց շարքում է նաև պրոբլեմային ուսուցումը, այսինքն՝ ուսուցման գործընթացի այնպիսի կազմակերպումը, որը սովորողին ստեղծված իրավիճակը գիտակցելու, առաջադրված խնդրում եղած հակասությունները հայտնաբերելու, չիմացածն ու անհայտը որոնելու, խնդիրը լուծելու և վերջնական նպատակին հասնելու հնարավորություն է ընձեռում: Նշված տեխնոլոգիայի էությունը պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է, որը նպաստում է սովորողների մտածողության մակարդակի բարձրացմանը: Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան մշակել է Ջ. Դյուին: Այս պարագայում ուսուցիչը մերժում է ավանդական դոգմատիկ ուսմունքը՝ դրան հակադրելով խնդիրների լուծման գործում սովորողների ակտիվ և անկախ պրակտիկ գործունեությունը: Պրոբլեմային ուսուցումը նպատակաուղղված է կրթության որակի բարձրացման խնդրի լուծմանը:

Պրոբլեմային ուսուցման էությունը, ինչպես նշում է Յու. Ա. Ամիրջանյանը, պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է: Այն պահին, երբ զրույցի մեթոդն առաջացնում է սովորողների զարմանքն ու տարակուսանքը, այդ պահին առաջանում է մի իրավիճակ, որն ընդունված է անվանել պրոբլեմային: Պրոբլեմային ուսուցման գիտական մշակումը կատարվել է միայն 20-րդ դարի 60-ական թվականներից սկսած: Ընդհանրապես պրոբլեմ ասելով՝ հասկացվում է խնդիր, որը ենթակա է լուծման, հետազոտման: Իր հերթին ուսումնական պրոբլեմի լուծման

համար անհրաժեշտ են գիտությանն ու մարդկությանը հայտնի, բայց լուծողին՝ աշակերտին, դեռևս անհայտ նոր գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ: Ուսումնական պրոբլեմը պրոբլեմային իրավիճակի այն բաղկացուցիչ տարրն է, որը առաջացրել է որոշակի դժվարություններ, տարակուսանք ու զարմանք, և որն էլ հենց սահմանվում, որոշակիացվում է պրոբլեմային իրավիճակի վերլուծության ընթացքում: Այստեղ ամենակարևորը պրոբլեմի արձանագրումն է, որի համար նախևառաջ անհրաժեշտ է ձևակերպել, որոշակիացնել առաջացած դժվարության բնույթը: Ընդհանրապես պրոբլեմ դնելը մեթոդաբանությունում համարվում է ստեղծագործական մտածողության առաջին փուլը՝:

Առանձնացնում են պրոբլեմային ուսուցման երեք տեսակներ՝

- 1) գիտելիքների պրոբլեմային մատուցում,
- 2) պրոբլեմային մատուցման տարբեր փուլերում սովորողների մասնակցություն որոնողական աշխատանքներին,
- 3) ուսուցման հետազոտական մեթոդ:



1.Տե'ս . Բալյան Ա.Ա., Մանկավարժական վարպետության հիմունքներ,Եր. ,1988,174էջ:

Պրոբլեմային իրավիճակների կիրառումը սովորողին կանգեցնում է կանխատեսված դժվարությունների առաջ, որոնց հաղթահարումը պահանջում է ստեղծագործական որոնում և ստիպում է սովորողին մտածել, որոնել, քննարկել, ինչն էլ նպաստում է նրա իմացական հետաքրքրությունների զարգացմանը: Սովորողը պետք է ինքնուրույն որոնի խնդրի լուծումը, իսկ ուսուցիչը պարտավոր է ղեկավարել նրա ուսուցման գործընթացը՝ մոտիվացնելով, կազմակերպելով, համակարգելով, ուղղորդելով և վերահսկելով: Պրոբլեմային ուսուցումը հնարավորություն է ընձեռում, որ սովորողի մոտ ձևավորվեն ինքնակրթության հմտություն, նպատակադրման կարողություն, ձևավորվեն և զարգանան համագործակցային այնպիսի օգտակար հմտություններ, ինչպիսիք են՝ ինքնագնահատումը, ինքնավերահսկումը, փոխադարձ վերահսկումը: Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան ապահովում է նաև ուսուցման անհատականացում՝ ըստ ուսուցման բովանդակության, յուրացման արագության, ինքնուրույնության մակարդակի, վերահսկման եղանակների:

Պրոբլեմային տեխնոլոգիայով դասերի կազմակերպումը և անցկացումը ուսուցչից պահանջում է այդ ուսուցման հետ կապված մի շարք մանկավարժական հասկացությունների և տերմինների իմացություն: Դրանք են՝

1. Պրոբլեմ – տեսական և գործնական խնդիր, որը պահանջում է լուծում: Պրոբլեմը գիտելիք է այն ուղիների մասին, որոնց միջոցով նյութը վերածվում է գիտելիքի:
2. Ուսումնական պրոբլեմ- գործնական կամ տեսական խնդիր, որն ունի անհայտից բխող որոշակի հասկացություններ, որոնց հաղթահարումը նոր գիտելիքների, գործողության նոր եղանակների պահանջ է դնում:
3. Պրոբլեմային շարադրանք – ուսուցչի կողմից հաղորդվող այն շարադրանքն է, որը պարունակում է ճանաչողական դժվարություն, ճանաչողական հարց կամ խնդիր, որոնք առաջ են բերում իրավիճակներ, որոնց հաղթահարման համար սովորողները կատարում են որոնողական, հետազոտական աշխատանքներ, ի հայտ բերում նյութի

2.Տե'ս Ա. Մանուկյան, Պրոբլեմային իրավիճակներում մանկավարժական խնդիրների լուծման ժամանակակից տեխնոլոգիաներ և տեխնոլոգիական համակարգեր, Եր. , 2013, 210 – 215 էջ:

մեջ եղած հակասությունները:

4. Պրոբլեմային հարց – հարց, որն առաջացնում է ճանաչողական կամ ինտելեկտուալ դժվարություն և հակասություն: Այդպիսի հարցի պատասխանը չկա սովորողների գիտելիքներում և ոչ էլ առկա է տեղեկատվության մեջ: Եթե պրոբլեմային հարցի պատասխանը չի պարունակում նոր գիտելիքներ, ուրեմն այդ հարցը պրոբլեմային չէ:

5. Ճանաչողական կամ պրոբլեմային խնդիր – ճանաչողական (պրոբլեմային) խնդիրն այն խնդիրն է, որի լուծման համար սովորողները որոնում են նոր գիտելիքներ, գործողությունների նոր եղանակներ:

6. Պրոբլեմային իրավիճակ – այն դժվարագույն կացությունն է, որն առաջանում է սովորողների հոգեվիճակում ծագած խնդրի, հարցի, փաստի և անհայտի հայտնաբերման եղանակների ու մեթոդների միջև հակասությունների հիման վրա:

Այսպիսով, եզրակացնում ենք, որ պրոբլեմային ուսուցումը խնդիրների վրա հիմնված գործողությունների մի շարք է, ինչպիսիք են խնդրահարույց իրավիճակների կազմակերպումը, խնդիրների ձևակերպումը, սովորողներին անհրաժեշտ օգնություն տրամադրելը խնդիրների լուծման հարցում, դրանց լուծումների ստուգումը և, վերջապես, ձեռք բերված գիտելիքների համակարգման և համախմբման գործընթացի կառավարումը: Ինչպես ասվեց, պրոբլեմային շարադրանքը տրվում է ուսուցչի կողմից: Շարադրման ընթացքում բացահայտվում են և լուծվում հակասությունները, արվում են դատողություններ, կառուցվում են վարկածներ, մերժվում են անհավանական պատասխանները և, ի վերջո, հանգում ճշմարտության: Սովորողներին պրոբլեմը լուծելու գործողություններին վարժեցնելու նպատակով ուսուցիչը ստեղծում է պրոբլեմային իրավիճակ, ինքն է որոնում դրանց հաղթահարման ուղիները և հասնում վերջնական նպատակին, մինչդեռ սովորողները մտովի մասնակցում են այդ գործընթացին: Այս մեթոդի էությունը կամ նշանակությունն այն է, որ ուսուցիչը ցուցադրում է գիտական ճանաչողության, պրոբլեմի լուծման նմուշները, իսկ աշակերտը սովորում է մտածել, ստեղծագործաբար ձեռք բերել գիտելիքներ:

## **2.Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը:**

Որո՞նք են պրոբլեմային ուսուցման մեթոդները:

Պրոբլեմային ուսուցման մեթոդը ժամանակակից դիդակտիկայում ուսուցման առաջավոր մեթոդներից մեկն է: Ինչպես նշում է ժամանակակից հայ մանկավարժ Յու. Ա. Ամիրջանյանը, այն ներառում է մանկավարժական բազմաթիվ արժեքավոր մեթոդների ու հնարների օգտագործման հնարավորություններ, ենթադրում սովորողների ինքնուրույն մտածողության զարգացման լայն հեռանկարներ: Պրոբլեմային ուսուցման ընթացքում սովորողների մեջ պետք է զարմանք առաջացնել: Ոչ մի առաջընթաց, հայտնագործություն առանց զարմանքի տեղի չի ունենում: Երեխաները սիրում են զարմանալ: Անսպասելի, զարմանալի մտքերը գրավում են նրանց ուշադրությունը: Հետևաբար՝ դասն անսպասելի նորությունով սկսելը շատ կարևոր է: Ըստ Յու. Ա. Ամիրջանյանի՝ զանազանվում են պրոբլեմային ուսուցման պրոբլեմային շարադրանքի, խթանող, մասնակի որոնողական կամ էվրիստիկական և հետազոտական առաջատար մեթոդներ և դրանց օժանդակող մեթոդներ՝ բացատրացուցադրական, վերարտադրողական, ծրագրավորված և այլն: Պրոբլեմային ուսուցումը հիմնականում հենվում է ստեղծագործական, էվրիստիկ մտածողության վրա: Հենց այդպիսի մտածողություն է պետք կիրառել ոչ ստանդարտ ֆիզիկական խնդիրներ լուծելիս: Բացի դրանից՝ պրոբլեմային ուսուցումը շատ արդյունավետ է նաև ֆիզիկայի տեսությունների ուսումնասիրման ժամանակ: Այստեղից հետևություն, որ պրոբլեմային ուսուցումը հեռանկարում պետք է դառնա դպրոցի ֆիզիկայի ուսուցման հիմնական մեթոդներից մեկը: Այդ տեսության կարևորագույն գաղափարները ուսումնական պրոբլեմի և պրոբլեմային իրավիճակի գաղափարներն են: Վերջինս բնութագրվում է որպես օբյեկտի և սուբյեկտի միջև մտավոր փոխազդեցության հատուկ տեսակ, որը ճանաչողական պահանջմունքներ է առաջացնում սուբյեկտի մոտ՝ մղելով նրան ձեռք բերել, բացահայտել կամ յուրացնել նոր գիտելիքներ կամ գործունեության տեսակներ:

Պրոբլեմային ուսուցման մեթոդները բազմազան են, այն է՝



1. Անալոգիայի եղանակ: Այս դեպքում ուսուցանողը հենվում է սովորողների փորձի վրա կամ արդիականացնում է նրանց նախկինում ստացած գիտելիքները նոր խնդիրների լուծման համար:

2. Մակաձական - վերլուծական - համադրական եղանակ: Սովորողներն ինքնուրույն ուսումնասիրում են երևույթն ու փաստերը և անհրաժեշտ եզրակացություններ կատարում:

3. Ուսումնասիրվող այս կամ այն երևույթի պատճառների որոնում: Պրոբլեմային ուսուցման այս եղանակը կիրառվում է այն դեպքում, երբ խնդրի լուծման կամ նոր գիտելիքների ձեռքբերման համար պահանջվում է գործածել ավելի վաղ ուսումնասիրված սկզբունք կամ օրինաչափություն:

4. Հակասական փաստի հաղորդում: Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան ենթադրում է նաև սովորողներին հակասական լեզվական իրողությունների, փաստերի հաղորդում: Վերջիններս հստակ օրինակներով պետք է կարողանան հիմնավորել ներկայացվող լեզվական փաստերի հակասականությունը:

Պրոբլեմային ուսուցման մեթոդները ենթադրում են ուսուցչի կողմից պրոբլեմի առաջադրում, ձևակերպում, լուծում՝ սովորողներին ցույց տալով դրանց լուծման ուղիները: Այս մեթոդի էությունը կամ նշանակությունն այն է, որ ուսուցիչը ցուցադրում է գիտական ճանաչողության, պրոբլեմի լուծման նմուշները: Ըստ այդմ, կարելի է առանձնացնել պրոբլեմային ուսուցման մեթոդների երկու տարատեսակ՝

1. դասավանդողի կողմից գիտելիքների պրոբլեմային շարադրման մեթոդ,

2. սովորողների ինքնուրույն ճանաչողական գործունեության կազմակերպման մեթոդ:

Պրոբլեմային ուսուցման կազմակերպման ժամանակ անհրաժեշտ է սովորողներին առաջնորդել դեպի ընդհանրացում և նրանց չտալ պատրաստի սահմանումներ, հասկացություններ: Պետք է ժամանակ առ ժամանակ սովորողներին ծանոթացնել գիտության մեթոդներին, ստեղծագործական առաջադրանքների միջոցով զարգացնել

նրանց մտքերի անկախությունը:

Այսպիսով, եզրակացնում ենք, որ պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան բովանդակում է պրոբլեմային իրավիճակների ստեղծման տարբեր եղանակներ, մեթոդներ, որոնք՝ որպես ուսուցման արդյունավետ հնարներ, առավել մատչելի ու նպատակային են դարձնում առարկայական գիտելիքի յուրացումը: Ֆիզիկայի ուսուցման ժամանակ պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան ենթադրում է նոր գիտելիքների, կարողությունների և հմտությունների մշակում և ամրապնդում, սովորողների մտածողության ու անձնային այլ որակների զարգացում: Այս տեխնոլոգիայի էությունն այն է, որ ուսուցիչը ցուցադրում է գիտական ճանաչողության, խնդիրների լուծման օրինակներ, արդյունքում ամրապնդվում ու յուրացվում են պրոբլեմային ուսուցման մեթոդներով ձեռք բերված գիտելիքները:

### **3. Պրոբլեմային ուսուցման կիրառումն առարկայի դասավանդման ընթացքում:**

Ինչպե՞ս կարելի է կիրառել պրոբլեմային ուսուցման մեթոդն առարկայի դասավանդման ընթացքում:

Ուսուցման ժամանակակից մեթոդները նոր պահանջներ են առաջադրում ուսուցման գործընթացում: Ուսուցման գործընթացում հաշվի են առնվում տեսական նյութը սովորողներին դյուրընկալ դարձնելու, համապարփակ ուսուցանելու, համապատասխան մեթոդ ընտրելու միջոցները: Պրոբլեմային ուսուցման միջոցով հնարավոր է ոչ միայն արդյունավետորեն իրականացնել տեսական նյութի ուսուցումը, այլև սովորողի մոտ ստեղծել ինքնազարգացման հմտություններ: Այդ ամբողջ գործընթացը հիմնված է առաջնային՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման ու զարգացման և երկրորդային՝ երկարաժամկետ անհատական կարողությունների զարգացման արդյունքների գիտակցված ընտրության վրա: Հետևաբար պրոբլեմային եղանակով իրականացվող դասերի արդյունավետությունը շատ ավելի բարձր կլինի, եթե սովորողը կարողանա ինքնուրույն տիրապետել գիտելիքներին, և մանկավարժը լուրջ դեկավարի այդ

գործընթացը, միաժամանակ առաջացնի որոշակի ինտելեկտուալ դժվարության հոգեվիճակ:

Ուսումնական խնդիրը կարող է առաջացնել պրոբլեմային իրավիճակ հետևյալ երկու դեպքերում.

ա) եթե նրա պայմանի և պահանջի հարաբերակցության մեջ մասնակցում է մտածողության սուբյեկտը՝ մարդը,

բ) եթե այդ մարդը նաև չգիտի, թե ինչպես լուծի տրված խնդիրը:

Ֆիզիկայի դասավանդման ընթացքում գիտական մեթոդի կիրառումը խաղում է երկակի դեր, նախ՝ հնարավորություն է տալիս սովորողներին ծանոթացնել ֆիզիկայի գիտության տարրերին, երկրորդ՝ դրանով իսկ դառնալով գիտելիքների հաղորդման արդյունավետ մեթոդ: Դրանք օգնում են սովորողների կողմից ֆիզիկայի դասընթացի մի շարք հարցերի հեշտ յուրացմանը, ֆիզիկական երևույթի ավելի խորությամբ վերլուծությանը: Դրանք մեծ մասամբ այն հարցերն են, որոնք վերաբերում են շարժման հարաբերականության, դինամիկայի հիմունքների, էներգիայի փոխակերպման պահպանման օպտիկայի օրենքներին, ջերմային շարժիչների գործողության սկզբունքին, առաձգական միջավայրում տատանումների տարածմանը, հարաբերականության տեսությանը, իդեալական գազի, տարբեր դաշտերի, միկրոմասնիկների, հեղուկ և պինդ մարմինների կառուցվածքային առանձնահատկությունների, վակուումում հոսանքի բնույթի, նյութերի մեխանիկական, ջերմային, էլեկտրական օպտիկական հատկությունների մեկնաբանմանը և այլն: Դրանք օգնում են գիտելիքների համակարգմանը, որը նպաստում է ֆիզիկայի ուղղակիորեն իրար հետ չառնչվող բաժինների շաղկապմանը: Այս տեսակետից իրենց մեջ լայն հնարավորություններ են պարունակում տեսական բնդհանրացումները, որոնք ֆիզիկայի տարբեր բաժիններին վերաբերող երևույթները և օրենքները բացատրող նույնատիպ տեսական մեկնաբանություններ են: Սկզբունքները, վարկածները, մտային մոդելները և մտային գիտափորձերը տեսական ընդհանրացումների լավագույն

միջոցներն են, որոնք անկասկած մեծ հնարավորություններ են ստեղծում՝ սովորողներին ամենակարճ ճանապարհով ցուցադրելու համար աշխարհի միասնական ֆիզիկական պատկերը և ակտիվացնելու նրանց ստեղծագործական մտածողությունը՝ բնության նորանոր երևույթների և օրենքների հայտնագործման ու դրանց տեսական հիմնավորման ուղղությամբ:

Ինչպես ցանկացած ուսումնական գործընթացի ժամանակ, այնպես էլ ֆիզիկայի պարապմունքները պլանավորելիս ու կազմակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները: Օրինակ, 5-7-րդ դասարանցիներին բնորոշ է վառ հետաքրքրասիրությունը, դիտողականությունը, որոշակի հմտությունների և կարողությունների արագ տիրապետումը, հուզականությունը, մասնավորապես՝ երևակայությունը: 8-10-րդ դասարանների աշակերտներին բնորոշ է ամեն ինչ հասկանալու, իմացածը համակարգելու, ընդհանրացնելու ձգտումը, ինքնուրույն սովորելու եղանակների նախընտրությունը, իրենց համար կարևոր առարկաների ընտրությունը :Ֆիզիկայի դասերին կիրառվող մեթոդները բազմազան են՝ զննումը, փորձը, լաբորատորիայի պրակտիկ աշխատանքը, տրամաբանական խնդիրների լուծումը, տեսաֆիլմերի, աղյուսակների և նկարների դիտումը և այլն: Այսօր ուսումնաստեխնիկական միջոցների շնորհիվ աշակերտներն ինքնուրույն աշխատանքի հնարավորություն են ստացել:

Ուսումնական նյութի բովանդակությամբ և սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններով պայմանավորված առաջարկվում են պրոբլեմային իրավիճակների ստեղծման տարբեր եղանակներ: Բերենք դրանցից մի քանիսի նկարագրություն՝

-Ուսումնասիրվող այս կամ այն երևույթի պատճառների որոնում:

-Պրոբլեմային հարցի առաջադրում :Այս մոտեցումն օգտագործվում է այն դեպքում, երբ պրոբլեմի լուծման կամ նոր գիտելիքների ձեռքբերման համար պահանջվում է կիրառել ավելի վաղ ուսումնասիրված սկզբունք կամ օրինաչափություն:

-Գիտնականի կարծիքի հիման վրա պրոբլեմային իրավիճակների ստեղծում:

-Իրար հակասող տեսակետների հաղորդում:

Կիրառվում է նաև պրոբլեմային ուսուցման մեկ այլ մոտեցում, երբ պահանջվում է ուսուցանվող նյութի մեջ գտնել և ինքնուրույն ձևակերպել իմացական պրոբլեմը: Դպրոցականներին կարելի է առաջարկել ինքնուրույն մշակել մարմինների ներքին էներգիայի փոփոխման հիմնական եղանակներն արտացոլող սխեմա, ֆիզիկական պրոցեսը բնութագրող մեծություններ և նրանց կապն արտահայտող բանաձևեր:

Պրոբլեմային ուսուցումն ուղղված է ուսումնական գործընթացի այնպիսի կազմակերպմանը և մեթոդաբանությանը, որում սովորողները ստեղծագործորեն փնտրում են իրենց հարցերի պատասխանները և օգտագործում են գիտելիքների անկախ ձեռքբերման առավել առաջադեմ մեթոդներ: Ուսուցչի խնդիրն է ձևակերպել խնդիրը և այն հարցերը, որոնք սովորողները պետք է պարզեն: Արդյունքում սովորողների մոտ առաջանում է այնպիսի վիճակ, երբ գիտելիքները կամ զարգացած հմտությունները անհայտ փաստի կամ երևույթի հետ համեմատելու արդյունքում հայտնաբերում են անհամապատասխանություն գիտելիքների և նոր փաստի միջև: Օրինակ՝ սովորողները գիտեն, որ մարմինը, որի խտությունն ավելի մեծ է, քան ջրինը, չի սուզվում ջրի մեջ: Բայց հետո ուսուցիչը պողպատե ասեղը զգուշորեն դնում է ջրի վրա, և այն մնում է մակերեսին: Ինչու պողպատե ասեղը չսուզվեց ջրի մեջ: Սա հակասում է Արքիմեդի օրենքին: Այսպիսով, ստեղծվում է հակասական վիճակ: Այս փաստը հակասում է նախկինում ձեռք բերված ճիշտ գիտելիքներին: Սա սովորողին ստիպում է ձևակերպել խնդիրն այլ կերպ, այն է՝ ո՞ր դեպքում չի գործում Արքիմեդի օրենքը: Ուսուցիչը հաշվի է առնում ջրի մակերևույթի փոխազդեցությունը դրա վրա դրված մարմնի մակերեսի հետ, փոխանցում է նոր գիտելիքներ մակերեսային շերտի կառուցվածքի, ջրի և դրա հատկությունների մասին և սովորողներին ներգրավում է նոր գիտելիքներ հայտնաբերելու գործընթացի մեջ: Պրոբլեմային իրավիճակը հիմնված է զարմանքի, տարակուսանքի վրա, նոր փաստը հակասում է առկա ճիշտ գիտելիքներին: Մտածելը միշտ սկսվում է պրոբլեմից կամ հարցից, զարմանքից կամ տարակուսանքից, հակասությունից:

Անհաջող ձևակերպված հարցը կարող է չեղյալ դարձնել ուսուցչի նախորդ բոլոր ջանքերը, սպանել առաջացող հետաքրքրությունը:

Այսպիսով, կարել է եզրակացնել, որ պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան բովանդակում է պրոբլեմային իրավիճակների ստեղծման տարբեր եղանակներ, մեթոդներ, որոնք՝ որպես ուսուցման արդյունավետ հնարներ, առավել մատչելի ու նպատակային են դարձնում առարկայական գիտելիքի յուրացումը: Ֆիզիկայի դասաժամին պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան ենթադրում է նոր գիտելիքների, կարողությունների և հմտությունների մշակում և ամրապնդում, սովորողների ստեղծագործական մտածողության ու անձնային այլ որակների զարգացում: Պրոբլեմային ուսուցման մեթոդները ենթադրում են դասավանդողի կողմից պրոբլեմի առաջադրում, ձևակերպում, լուծում՝ ցույց տալով դրանց լուծման ուղիները: Այս տեխնոլոգիայի էությունն այն է, որ դասավանդողը ցուցադրում է գիտական ճանաչողության, խնդիրների լուծման օրինակներ, արդյունքում ամրապնդվում ու յուրացվում են պրոբլեմային ուսուցման մեթոդներով ձեռք բերված գիտելիքները: Պրոբլեմային իրավիճակների կիրառումը սովորողի համար հանգեցնում է կանխատեսված դժվարությունների, որոնց հաղթահարումը պահանջում է ստեղծագործական որոնում, ստիպում է սովորողին մտածել, ելք փնտրել, քննարկել և խնդրի լուծումից հաճույք զգալ, որն էլ նպաստում է տվյալ առարկայի հանդեպ ակտիվ իմացական հետաքրքրությունների զարգացմանը:

#### **4. Եզրակացություն:**

Այսպիսով, վերը նշվածից եզրակացնում ենք, որ պրոբլեմային ուսուցումն ուսուցման տեսակ է, որը համատեղում է սովորողների համակարգված անկախ որոնողական գործունեությունը պատրաստի եզրակացությունների հետ, և կառուցված է մեթոդների համակարգից: Պրոբլեմային ուսուցման ընթացքում ուսուցիչը համակարգված կերպով ստեղծում է խնդրահարույց իրավիճակներ և կազմակերպում սովորողների գործունեությունը կրթական խնդիրների լուծման համար, ապահովում է նրանց անկախ գործունեության օպտիմալ համադրություն՝ գիտության պատրաստի եզրակացությունների յուրացման հետ: Պրոբլեմային

ուսուցումը նպաստում է սովորողների մտածողության, հուզական ոլորտի զարգացմանը և այդ հիմքի վրա աշխարհայացքի ձևավորմանը: Սա է հիմնական տարբերությունը պրոբլեմային ուսուցման և ավանդական ուսուցման միջև: Պրոբլեմային ուսուցումը միշտ պետք է կապված լինի որոշակի հակասությունների հաղթահարման հետ, որոնք հիմք են հանդիսանում խնդրահարույց իրավիճակ ստեղծելու և խնդիր դնելու համար: Դասավանդման պրոբլեմային մոտեցումը պետք է և կարող է արտացոլվել ուսումնական ծրագրերում, ուսուցչի կողմից գիտելիքների ներկայացման, սովորողների ինքնուրույն աշխատանքի և այլնի մեջ: Ուսուցչի դերն այն է, որ աշակերտը զգա գործնական կամ տեսական բնույթի դժվարությունը, հասկանա ուսուցչի կողմից առաջադրված խնդիրը կամ ինքը ձևակերպի, ցանկանա լուծել այն:

Պրոբլեմային ուսուցման գործընթացը կախված է խնդրի բնույթից և լուծման բարդությունից: Պրոբլեմային իրավիճակներ ստեղծելու ուղիների դասակարգումը հիմնված է ուսման գործընթացում ծագող հակասության բնույթի վրա: Դրանք են՝

1. Սովորողների բախումը տեսական բացատրություն պահանջող երևույթների և փաստերի հետ:
2. Կրթական և կյանքի իրավիճակների օգտագործումը, որոնք առաջանում են այն ժամանակ, երբ սովորողները կատարում են գործնական առաջադրանքներ:
3. Դաստիարակչական խնդիրների առաջադրանքներ դնելը՝ բացատրելու համար երևույթը և որոնելու դրա գործնական կիրառման ուղիները:
4. Խրախուսելով սովորողներին վերլուծել իրականության փաստերն ու երևույթները՝ բախվելով առօրյա փաստերի վերաբերյալ գիտական հասկացությունների հակասությունների հետ:
5. Վարկածների, եզրակացությունների ձևակերպում և դրանց փորձարարական ստուգում:
6. Խրախուսելով սովորողներին համեմատել, հակադրել երևույթների, կանոնների, գործողությունների փաստերը, որոնց արդյունքում կա ճանաչողական դժվարություն:

7.Խրախուսել սովորողներին նախնական ընդհանրացնել նոր փաստերը:

8.Սովորողներին ծանոթացնել փաստերի հետ, որոնք, կարծես, անբացատրելի են, և գիտության պատմության մեջ տրված են գիտական խնդիր ձևավորելու համար:

9.Միջանկյալ հաղորդակցությունների կազմակերպում:

Պրոբլեմային ուսուցումը չի կարող հավասարապես արդյունավետ լինել բոլոր պայմաններում: Եթե աշակերտն ունի այս կամ այն հարցի պատրաստի պատասխանը, ապա ունեցած գիտելիքները հիշելուց և վերարտադրելուց բացի նրանից մտածողության ջանքեր չեն պահանջվում: Իմացական պրոբլեմը աշակերտին դուրս է բերում իր ունեցած գիտելիքների շրջանակից և փոխադրում դեռևս անհայտ, որոնում պահանջող մտածողական գործունեության ոլորտ: Այսպիսով, կարևոր է ուսումնական գործընթացում իմացական խնդրի առկայությունը: Պրոբլեմային իրավիճակը պետք է ունենա նաև հոգեբանական էլեմենտ՝ փաստերը պետք է լինեն նոր և տպավորիչ, իսկ իմացական խնդիրը՝ անսովոր, արտառոց, հետաքրքրությունը գրգռող, այն պետք է հետաքրքրի սովորողին և նրա մեջ առաջացնի իմացական որոնման ձգտում: Խնդիրները նպաստում են սովորողների մտքի ակտիվացմանը, տրամաբանության և իմացական հետաքրքրությունների զարգացմանը: Խնդրի ինքնուրույն լուծումը սովորողի համար դառնում է մի փոքրիկ հայտնագործություն, այն ուղեկցվում է բավարարվածությամբ և դրական հույզերով, այն հետաքրքիր է և չձանձրացնող: Խնդիր լուծող աշակերտը դառնում է ավելի ինքնավստահ:

Այսպիսով, պրոբլեմային ուսուցումը հիմնված է այն խնդրի վրա, որն ուղղված է ճանաչողության օբյեկտը վերափոխելուն, դրա լուծման ուղիներ գտնելուն, ինչը ենթադրում է որոշ սահմանափակումներ լուծումների ընտրության հարցում: Խնդիրը կամ խնդրահարույց իրավիճակն այնպիսին են, առաջին հերթին, այնքանով, որքանով պարունակում են անհայտություններ, անորոշություններ, որոնք պետք է լրացվեն, որոնց տեղում պետք է դրվեն գիտելիքները: Պրոբլեմային ուսուցման գործում ճանաչողական գործունեության հիմնական փուլերն են՝ խնդիրը հասկանալը, խնդիրը լուծելը, լուծումը ստուգելը:



## **5. Օգտագործված գրականության ցանկ:**

1. Դավթյան Մ. և ուրիշներ, Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Երևան, 2004:

2. Լ. Ն. Պետրոսյան, Մտային գիտափորձը ֆիզիկայի ուսուցման գործընթացում, 1998թ.:

3. Ա. Մանուկյան, Պրոբլեմային իրավիճակներում մանկավարժական խնդիրների լուծման ժամանակակից տեխնոլոգիաներ և տեխնոլոգիական համակարգեր, Եր., 2013:

4. Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Երևան, 2005:

5. Բալյան Ա.Ա., Մանկավարժական վարպետության հիմունքներ, Եր., 1988:

6. Օկոն Վ. , Պրոբլեմային ուսուցման հիմունքները, 1968: